



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

10 սեպտեմբերի 2019 թվական N/105-L
ք. Երևան

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահավարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 7-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2019 թվականի օգոստոսի 16-ի «Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 102-L որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 20-րդ կետի 19-րդ ենթակետը՝

հրամայում եմ

1. Հաստատել Հանձնաժողովի ներքին աուդիտի բաժնի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքէջում (www.competition.am) հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԱՀ



Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ ԲԱԺՆԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ներքին աուդիտի բաժինը (այսուհետ՝ Բաժին) Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Բաժինն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք), «Ներքին աուդիտի մասին» օրենքով, այլ օրենքներով և նորմատիվ իրավական ակտերով, Հանձնաժողովի որոշումներով, Հանձնաժողովի և սույն կանոնադրությամբ, ինչպես նաև Հանձնաժողովի նախագահի հրամաններով:

3. Բաժնի կանոնադրությունը հաստատում, փոփոխում և ուժը կորցրած է ճանաչում Հանձնաժողովի նախագահը:

4. Բաժնի կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատում և փոփոխում է Հանձնաժողովի նախագահը:

II. ԲԱԺՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

5. Բաժնի հիմնական խնդիրներն են.

1) Հանձնաժողովին վերապահված գործառույթների ներքին աուդիտի իրականացումը.

2) Հանձնաժողովի կողմից գործառույթների իրականացմամբ պայմանավորված ռիսկերի բացահայտումը և գնահատումը.

3) Հանձնաժողովի գործունեության ֆինանսական կառավարման, հսկողության և կառավարչական գործընթացների արդյունավետության և համապատասխանության գնահատումը:

III. ԲԱԺՆԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6. Բաժնի իրավասություններն են՝

1) այն կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներից և աշխատակիցներից աջակցություն ստանալը, որտեղ իրականացվում է աուդիտը.

2) պատասխանատու աշխատակիցներից պահանջելու և ստանալու Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ ամբողջ, այդ թվում՝ գաղտնի տեղեկատվությունը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված գաղտնի տվյալների հասանելիության կարգի, և բոլոր գրառումները, այդ թվում՝ էլեկտրոնային, որոնք անհրաժեշտ են աուդիտի իրականացման համար:

3) ներքին աուդիտի կոմիտեի և դրա անդամների հետ համագործակցելը, նրանց խորհրդակցություններին մասնակցելը:

IV. ԲԱԺՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Բաժնի գործառույթներն են՝

1) Հանձնաժողովում ներքին աուդիտի մասին օրենսդրությամբ նախատեսված գործառույթների՝ իրեն վերապահված աշխատանքների իրականացման ապահովումը.

2) Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումներին աուդիտի ենթարկելը և դրանց գործունեության մասին առաջարկությունների ներկայացումը.

3) աուդիտի ենթարկվող օբյեկտների կողմից օգտագործվող կամ տրամադրվող ֆինանսատնտեսագիտական բնույթի տեղեկատվության արժանահավատության և ճշտության գնահատման իրականացումը, սկզբնական գրանցումների ճշտության գնահատումը, առկա անհամապատասխանությունների բացահայտումը.

4) ռիսկերի բացահայտմանն ու գնահատմանը օժանդակելը.

5) ներքին աուդիտի կանոնակարգի նախագծի, ներքին աուդիտի ռազմավարական և տարեկան ծրագրերի պատրաստումը և Հանձնաժողովի նախագահին ու ներքին աուդիտի կոմիտեին ներկայացումը.

6) կատարման ենթակա աուդիտորական առաջադրանքների մշակումը և կազմումը.

7) ներքին աուդիտի տարեկան ծրագրի կատարմանը և ներքին աուդիտի մեթոդաբանության իրականացմանը հետևելը.

8) անհրաժեշտության դեպքում, խորհրդակցելով լիազոր մարմնի հետ, Բաժնի գործունեության համար առանձին մեթոդաբանության մշակումը.

9) ներքին աուդիտի տարեկան գործունեության ծրագրի իրականացման մասին հաշվետվության կազմումը.

10) Բաժնի կողմից իրականացվող գործառույթների վերաբերյալ պարբերաբար Հանձնաժողովի նախագահին տեղեկատվության ներկայացումը՝ Հանձնաժողովի կայքում տեղադրելու համար.

11) աուդիտի ենթարկվող օբյեկտների հաշվապահական հաշվառման գրանցումների մեջ տեղ գտած անհամապատասխանությունների բացահայտումը.

12) Հանձնաժողովի կողմից ծախսերի տնտեսման ուղղությամբ իրականացվող աշխատանքների և տնտեսման հնարավորությունների օգտագործման գնահատման իրականացումը.

13) Հանձնաժողովի՝ օրենսդրության պահանջներին համապատասխան գործելու գնահատումը.

14) Հանձնաժողովի ներքին հսկողության համակարգի գնահատումը.

15) Հանձնաժողովի նախագահի և գլխավոր քարտուղարի՝ Բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, եզրակացությունների, այլ փաստաթղթերի նախապատրաստումը ապահովելը, ստորագրման ներկայացնելը.

16) Հանձնաժողովի նախագահին աուդիտի իրականացման խոչընդոտների և խնդիրների վերաբերյալ զեկուցումը.

17) ներքին աուդիտի իրականացման համար հատուկ գիտելիքներ ու հմտություններ պահանջվելու դեպքում, Հանձնաժողովի նախագահին՝ փորձագետ նշանակելու առաջարկության ներկայացումը.

18) իր լիազորությունների սահմաններում Հանձնաժողովի որոշման կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման ապահովումը.

19) Օրենքով, այլ օրենքներով ու իրավական ակտերով, ինչպես նաև Հանձնաժողովի և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթների իրականացումը:

Վ. ԲԱԺՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

8. Բաժինը գործում է բաժնի պետի անմիջական ղեկավարությամբ:

9. Բաժնի պետն անմիջական հաշվետու է Հանձնաժողովի նախագահին:

10. Բաժնի գործառույթների իրականացմամբ ստեղծված ելից գրությունները ստորագրում են Հանձնաժողովի նախագահը կամ Հանձնաժողովի գլխավոր քարտուղարը:

11. Բաժնի գործառույթների իրականացմամբ ստեղծված Հանձնաժողովից չելքագրվող գրությունները ստորագրվում են բաժնի պետի կողմից:

ՆԱԽԱԳԱՀ



Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ